

այնքան ալ մեծ՝ իրենց անցումէն յետոյ, երբ գործն ալ իր կարգին դառնայ փոշի, պատմական չոր յիշատակ մը միայն: Երբեմն մահուան մէջ սա հաշտութիւնը, հաճութիւնը, անով փաղաղուիլ մը միայն չի բացատրուիր կանխագրութեամբ: Անիկա, կեանքին մէջ անըմբռնելի խաղովը, ապրումի խտութիւն մըն է, անհաւատալի լիութիւն մը, ամբողջութիւն մը, որոնք տպաւորիչ են, մեր հիացումը հարկադրելու աստիճան: Վերցուցէք նահատակի մը, հերոսի մը, մեծ զոհի մը կեանքէն այն շրջանը, օրերը, որոնք անոնց մահը կարապետեցին: Մնացածը: Անդարման միջակութիւնն է: Այդ աշխարհին (մահուան) ոլորտէն ներս միայն այդ կարգի մարդերը կ'ելլեն ուժի, խորքի, գեղեցկութեան:

Ընկեր Մաթիկը առայժմ, մինչեւ մօտաւոր մահը, որուն խոր նախազգացումը առջի օրէն ունեցայ այնքան ճմրւումով եւ որ հետզհետէ զարգացաւ, վճռական ու աննահանջ ընդվզում մըն էր, մեր ժողովուրդը փրկելու ինքնայատուկ հանգամանքով մը, աւա՛ղ, անորոշ: Չտուաւ յօդուածները իր հաւատքին, թէ եւ հասած ըլլար ծայրակէտը իր խուզարկութեանց: Պոլի՛ս: Չունէր անցնելիք, լրտեսներուն ո՛չ թէ վախէն, այլ՝ ապահովութենէն:

Կ'ընդմիջեմ գինքը իր դատումներուն մէջ (տասնը-հինգ օր մարդ քիչ չի խօսիր, երբ Մաթիկին նման կոկորդալ ունի) ու ընդդիմադիրի իր կեցուածքը չեմ գիտեր ինչու կը փորձուիմ կապել, պայմանել նաեւ իր միւս բնագղներովն ալ, արկածախնդրակա՛ն, ինչպէս էր սա կեանքը, այնքան մեծկակ պողոտայի մը վրայ, ինչպէս էր իր պատմումը կովարած Ակոյի քարայրին մէջը...

Կը զեղչեմ դարձեալ երկրաբանական, տնտեսական, էստետիկական իր նշմարանքները այդ ուղեւորութենէն, որոնք այդ ատեն շահեկանութիւն ունէին թերեւս, երբ ժողովուրդին բեկորները ցրուած էին այդ հոյակապ տեքորին զանազան խորշերուն մէջ: Պէտք է մտնել անոր հետ Լեւոն Մեծագործի երկիրը: Ու տխրիլ անոր տխրութիւնը, որ ո՛չ գիտական էր եւ ոչ ալ բանաստեղծական: